ՆՈՐ ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Н. Я. МАРР, *Ереруйская базилика* (армянский храм V—VI вв. в окрестностях Ани)— Изд. АН Арм. ССР, Ереван, .1968, тираж 600.

Անիի պարբերական պեղումների շրջանում ակադ. Ն. Մառը ուսումնասիրում էր նաև մի-ձակա կարևոր հուշարձանները, որ թելադրված էր միջնադարյան Հայաստանի նյութական ու հոգևոր մշակույթի ամբողջական և համադիր քննության սկզբունքով։ Երերույքի բազիլիկան Ն. Մառին ներկայանում էր իբրև համաբնույթ կառույցների կարևոր նմուշ, մանավանդ Տեկորի նշանավոր տաճարի զուգահեռության պարագայում։ 1907—1908 թվականներին գիտնականը երիցս հանդես է եկել Երերույքին ու նրա տիպի մյուս հուշարձաններին նվիրված զեկուցումով. Հետագայում, 1910/14 թվականներին, Ն. Մառը հրատարակության է պատրաստում Երերույքին նվիրված իր ուսումնասիրությունը՝ համապատասխան աղյուսակ-տախտակներով, որ սակայն ինչ-ինչ պարագաների թելադրանքով մնաց չհրապարակված։ ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ, պրոֆ. Կ. Վ. Տրեվերը տպագրության է պատրաստել այդ աշխատությունը, կցելով տակավին այն ժամանակ տպագրված աղյուսակները։

Ակադ. Ն. Մառը հանգամանորեն նկարագրում է Երերույքի բազիլիկան, ճշտում նրա նախնական տեսքը, մատնանշում հետագա վերակառուցումները, արժեքավոր տեղեկություններ հաղորդում տեղանքի վերաբերյալ, տալիս ճարտարապետական վերլուծությունը։ Առանձին կարևորություն ունի աշխատության այն մասը, ուր Տեկորի տաճարը Երերույքի հետ համադրելուց հետո նրանց զուգահեռություններն է որոնում արևելյան քրիստոնեության երկրներում, մանավանդ Ասորիքում։ Ներկա դեպքում Ն. Մառի համար ելակետային նշանակություն ունի դավանաբանական ազդեցությունների ոլորտի հարցը։ V—VI դարերը նա վաղաժամ է համարում բյուզանդական ազդեցության համար և արդարացիորեն տաճարի նախատիպային կառույցներ որոնում տակավին հեթանոսական շրջանի Հայաստանում։ Գիտնականն անում է մի շարք կարևոր ու սկզբունքային նկատողություններ, որոնք ուսանելի են այսօր ևս։

«XIX դարի հայ փիլիսոփայական մտքի պատմությունից»— *Մենագրությունների և հոդվածների ժողովածու, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969, տպաքանակը 1500, 332 էջ։*

XIX դարի հայ փիլիսոփայական, հասարակական-քաղաքական միտքը հայ ժողովրդի բազմադարյան մշակույթի հարուստ ու բազմաբովանդակ էջերից է։ Անշուշտ, մինչև այժմ այն արժանացել է բազմաթիվ ուսումնասիրողների ուշադրությանը և վեր է հանվել նրա բովանդակության առանձին կողմերը։ Բայց դեռևս նրա շատ հարցեր կարոտ են բազմակողմանի և մասնագիտական հետազոտման։

Ներկա փոքրածավալ մենագրությունների և հոդվածների ժողովածուում լուսաբանվում են անցյալ դարի առաջին կեսի այն ներկայացուցիչների հայացքները, որոնց փիլիսոփայական և հասարակական-քաղաքական ըմբռնումները դեռևս կամ անբավարար են ուսումնասիրված և կամ չեն արժանացել մասնագիտական վերլուծության։ Աշխատության հեղինակները վեր են հանել 50—60-ական թվականների հայ նշանավոր մտածողներ Մ. Թաղիադյանի, Ա. Բագրատունու, Ս. Նազարյանցի և Պ. Էմմանուելյանի փիլիսոփայական, տրամաբանական, սոցիալ-քաղաքական ու գեղագիտական հայացքները և նոր նյութերի հիման վրա վերագնահատել դրանք։ Ժողովածուն բացվում է Գ. Հ. Գրիգորյանի «Մեսրոպ Թաղիադյանի հասարակական-քաղաքական հայացքներ» հոդվածով։ Հոդվածագիրը նշում է, որ Թաղիադյանը թեպետև գերազանցապես գրող է, հասարակական գործիչ ու մանկավարժ, բայց իբրև մտածող նա իր ժամանակին բարձրացրել է այնպիսի հարցեր, որոնք առնչվում էին հայ ժողովրդի տնտեսության ու մշակույթի հետագա վերելքի

հետ և հայ կյանքը վերակառուցելու պահանջներ առաջադրելիս առաջնորդվել է տեսական որոշակի սկզբունքներով, որոնցով և Թաղիադյանը կապվում է հայ փիլիսոփայական մտքի հետ։

Երկրորդը՝ Ա. Մ. Թևոսյանի «Արսեն Բագրատունին որպես փիլիսոփա» մենագրությունն է, որին հաջորդում է Ռ. Կարապետյանի «Ստեփանոս Նազարյանցի աշխարհայացքը» մենագրությունը։ Ինչպես պարզվում է շարադրանքից, Նազարյանցին հոգևոր մշակույթի ընագավառները՝ ժողովուրդների պատմությունը, հասարակական ուսմունքները, լեզվի և գրականության խնդիրները, հետաքրքրում էին գերազանցապես լուսավորչական նպատակներով։ Փիլիսոփայության հարցերը նրան զբաղեցրել են այնքանով, որքանով դրանք առնչվել են լուսավորչական նպատակների հետ։

Ժողովածուի վերջում տեղավորված է Է. Գ. Ռշտունու «Պողոս Էմմանուելյանի տրամաբանական հայացքները» հոդվածը։

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՍՐԱՊՅԱՆ — «Հայ միջնադարյան զրույցներ», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969, տպաքանակը 5000, 414 էջ։

Ներկա աշխատությունը հայ միջնադարյան զրույցների բանասիրական ու գրականագիտական ուսումնասիրության մի փորձ է և գալիս է լրացնելու մեր գեղարվեստական արձակի այս շատ կարևոր տեսակներից մեկի մասին մեր իմացությունները։ Հետազոտության համար նյութ են ծառայել Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում պահված զրույցների ավելի քան հարյուր ձեռագրեր, որոնք լայն տարածում էին գտել XIII—XVIII դարերում, և զանազան տպագիր երկեր ու ժողովածուներ։

Գիրքը բաղկացած է երկու մասից։ Առաջին մասում Սրապյանը անդրադարձել է հայ միջնադարյան զրույցի ժանրային առանձնահատկությունների բնույթի ու զարգացման, զրույցների աշխարհականացման ու անկախացման և նրանցում արտացոլված կյանքի ու աշխարհայեցության հարցերին, իսկ երկրորդ մասում զետեղել է զրույցների բնագրերը՝ հայ ընթերցողին անմիջապես ծանոթացնելու և սեփական եզրակացությունների հնարավորություն ընձեռելու նպատակով։

Աշխատությունն ունի ռուսերեն ամփոփում, ծանոթագրություններ, ցանկեր և բառարան։

Ռ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ —«Մարտիրոս Մնակյան», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969, տպաքանակը 1500, 262 էջ։

Աշխատությունը նվիրված է արևմտահայ թատրոնի խոշորագույն դերասաններից և ռեժիսորներից մեկի կյանքին և ստեղծագործությանը։ Մնակյանի արտիստական կյանքը սկսվում է անցյալ դարի 50-ական թվականների վերջին և ավարտվում մեր դարի երկրորդ տասնամյակով։ Հայ ոչ մի դերասանի ստեղծագործություն չունի ժամանակի այսպիսի լայն ընդգրկում։ Պարզ է, որ այդպիսի երկար ստեղծագործական գործունեություն ծավալած արվեստագետի մասին, իր ժամանակին, գրվել է բավական շատ։ Հեղինակը ուշադրության կենտրոնում ունենալով Մնակյանի մասին գրված բազմազան նյութեր, փորձել է ի մի բերել և լրացնել դերասանի կյանքի մանր ու խոշոր փաստերը, զուգահեռաբար բացելով նրա ստեղծագործական կերպարը։ Մանրամասն լուսաբանված են նրա բեմական կյանքը, առանձին դերակատարումները, ստեղծագործական սկզբունքները և թատերական-հասարակական միջավայրը։